608
9-69

25 DEC 2008

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

20 JUL 2010

Հ. Ս. Խ. Հ.

ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆԱԾ 2-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հողժողկոմատի ցերկայացուցիչ ընկ. Ա. Վարդանյանի յեվ Ցեղարդժողկոմատի տեղակալ ընկ. Ռ. Գրիգորյանի զեկուցումների առթիվ

12002

608
Գ-69

Հրատ. ՀԱՄԽ-ի կից Գյուղ. Հաշ. խորհրդի
Ա. ՍԵՐԲԱՆ
1936 թ

20 MAR 2013

Գ-69

Խորհրդային գյուտարարությունն ինչպես վողջ միության մեջ, նույնպես և Խորհրդային Հայաստանում վերջին տարիների ընթացքում զգալի նվաճումներ է ունեցել, որոնք արտահայտում է բանվորների, կոլտնտեսականների, ճարտարապետ—տեխնիկների, գիտա—հետազոտական ֆիլիալների, լայն մասսաների նախաձեռնության ծավալումով։

Ժողովրդական տնտեսության զարգացման և գյուտարարության այդ հաջողությունները և հսկայական հաղթանակները ձեռք են բերված առաջին հնգամյակում և 2-րդ հնգամյակի անցած տարիներում, Խորհրդային Միության բանվոր գեսակարգի կողմից սոցիալիստական շինարարության ընդգավառում Կոմունիստական կուսակցության և ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ։

Գյուտ. ընկերության խորհրդի տվյալներով 1935 թ. Հայաստանում յեղել է 441 առաջարկ, իսկ 1936 թ. 1-ին չորս ամսում յեղել է 283 առաջարկ, միաժամանակ բարձրացել է առաջարկների վորակական ցուցանիշները (տեխնիկական գրագետ հիմունքներով)։

Վերջերս արդեն գործածության մեջ է դրվել ապարանում ընկ. Գ. Քանքանյանի տետրակ կտրող և ծալող մեքենան, Ա-բարատ գործարանում ընկ. ընկ. Սաքոյանի և Մալիկի կատարելագործված տակառագործական մեքենան, Մշակում է Ա. Որտոյանի բամբակահավաք մեքենան, Վ. Սարգսյանի այգեթաղ մեքենան, Միսիթարյանի և Ադամյանի տուֆ կտրող մեքենան, Ստեփանյանի և Շահնազարյանի խրոմպիկի մնացորդներից ներկեր պատրաստելու հայտնագործությունը, վորոնք տալիս են աշխատանքի բարձր արտադրողականություն և հարյուր—հազարների տնտեսում։

Ստախանովյան շարժման մեջ աշխատավորության լայն մասսաների ընդգրկումը և մեր սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի իմաստուն ցուցմունքները նոր լիցք տվեցին գյուտարարության և ռացիոնալացման աշխատանքների զարգացմանը։

Չնայած ձեռք բերված հաջողություններին այնուամենայնիվ Հայաստանի գյուտարարությունը դեռևս հետ է մնում սոցիալիստական տնտեսության կողմից առաջարկված պահանջները լրիվ կատարելուց։

Ցեղնելով դրանից պլենումը արձանագրում է՝ վոր Հայաստանի Հողժողկոմատում և Տեղարդժողկոմատում բացակայել է

աշխատանքի պատասխանատվության զգացմունքը, տրեստներ-ը ինչպարարական, արդյունաբերական և գյուղատնտեսական վորոշ ոբյեկտները դեռևս լրջորեն չեն զբաղվում գյուտարարության և ռացիոնալացման խնդիրներով՝ թերագնահատելով գյուտարարության և ռացիոնալացման գործը։ Տեղարդժողկոմատում և Հողժողկոմատում գյուտռաց. առաջարկների հաշվառումը բավարար չէ, այնտեղ չի պլանավորված աշխատավորական մասի ստեղծագործական նախաձեռնությունը։ Այդ ժողկոմատներում և վորոշ տնտեսական ձեռնարկներում դեռևս հաշվի չի առնված արտադրության նեղ տեղերը, վորոնք արգելակում են աշխատանքի առաջընթացը։

Պլենումը արձանագրում է, վոր ԺԿՄ-ին կից գյուտարարական կոմիտեն մինչև այսոր էլ չէ գլխավորել ժողկոմատներում և ձեռնարկություններում գյուտարարության և ռացիոնալացման աշխատանքները, վորի արդյունքն եղել է ժողկոմատներում տիրող գյուտռաց. աշխատանքների ներկա վատթար դրությունը։

Միանգամայն անբավարար է արդարադատության որգանների կողմից գյուտարարության և ռացիոնալացման առաջարկների ձգձգումների դեմ մղվող պայքարը, յեղել են դեպքեր, վոր գյուտռաց. առաջարկների ձգձգման վերաբերյալ բողոքները մեկից ութ ամսով մնացել են դատական որգաններում՝ առանց ընթացք ստանալու (Յերևան-Լենինական)։

Գյուտարարական ընկերությունը դեռևս չի կարողացել ժողկոմատներում, տրեստներում և ձեռնարկություններում լրիվ չափով ապահովելու աշխատավորության ստեղծագործումների պլանաչափ ծավալումը, հիմնարկ-ձեռնարկներում, խորհտնտեսություններում կան գյուտընկերություններ, վորոնք դեռևս չեն համախմբվել կոլեկտիվ ստեղծագործության շուրջը։ Գյուտընկերությունը դեռևս չի ընդգրկել Հայաստանի բոլոր ոբյեկտները։

Պլենումը արձանագրում է, վոր կոմյերիմիության և պրոֆմիությունական կազմակերպությունները մինչև այժմս հարկ յեղած ուշադրությունը չեն դարձրել գյուտարարության և ռացիոնալացման աշխատանքների կազմակերպման և առաջարկների

կենսագործմանն ժանդակելու գործում՝ այդպիսով անտես են արել ՀԱՄԿՄ-ի մի շարք վորոշումները՝ գյուտարարության աշխատանքների մասին։

Արձանագրել նաև վոր գյուտարարներին գործնական ոժանդակություն ցույց տալու գործում ՃՏՄ-ի կազմակերպությունները նույնպես թույլ աշխատանք են ծավալել։

Յելնելով վերոհիշյալից պլենումը վորոշում է՝

1. Գտնել միանգամայն թույլ Հողժողկոմատի և Տեղարդժողկոմատի կատարած գյուտարարական աշխատանքները։ Ժողկոմատներում և տնտեսական բոլոր ոբյեկտներում, գյուտարարական և ռացիոնալացման բոլոր աշխատանքները գլխովին կատարելու և առաջ մղելու համար առաջարկել Տեղարդժողկոմատին, Հողժողկոմատին և բոլոր տնտեսական ձեռնարկների ղեկավարներին, իրենց անձնական պատասխանատվությամբ ձեռնարկելու՝

1. Պլանավորել այն առաջարկները, վորոնք վերամշակման և մշակման կարիք են զգում կազմելով նրանց համար նախահաշիվներ և հատուկ մարդկանց պատասխանատու դարձնել այդ առաջարկների մշակմանն ու կենսագործմանը։

2. Մինչև ս. թ. հունիսի 15-ը հավաքագրել մինչև այժմս յեղած բոլոր առաջարկները և ընթացք տալ նրանց հավաքագրման որվանից վոչ ուշ քան 10 որվա ընթացքում։

3. Առաջարկների վերամշակման և փորձարկման համար կազմակերպել եքսպերիմենտալ բազաներ՝ առաջարկների մշակման գործին մասնակից դարձնելով գիտա-հետազոտական ինստիտուտներին, լաբարատորիաներին և զոնալ կայաններին։

4. Հեղինակների և տնտեսավարների միջև գյուտարարության և ռացիոնալացման առաջարկների նկատմամբ առաջացած կոնֆլիկտները լուծելու համար ԱՊԽ-ին կից գյուտկոմիտեին 1934 թ. հուլիսի 17-ի վորոշման համաձայն, կազմակերպել կոնֆլիկտային հանձնաժողովներ՝ ժողկոմատներում և խոշոր գործարաններում։

5. Գյուտարարության և ռացիոնալացման աշխատանքների հետագա ծավալման, արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման համար մինչև հուլիսի 25-ը հաշվի առնել արդյունաբերության և գյուղատնտեսության ընագավառներում նկատվող նեղ տեղերը կազմել սոցիալիստական պատվերներ և լայն աշխատավորության ստեղծագործական նախաձեռնությունները համախմբել այդ սոցպատվերների կենսագործման շուրջը

6. Բանվոր գյուտարարների և ռացիոնալիզատորների ոժանդակելու համար խոշոր գործարաններում կազմակերպել գյուտարարական կաբինետներ այնտեղ ապահովելով հեղինակավոր մասնագետներից բաղկացած կոնսուլտացիոն հանձնաժողովներ։

7. Մինչև ս. թ. հուլիսի վերջը կարգավորել ժողկոմատներում և ձեռնարկություններում գյուտարարության ու ռացիոնալացման ոժանդակող ֆոնդերն՝ այն ոգտագործելով միայն իրենց նպատակին։

8. Ժողկոմատներին, գործարանների, սովխոզների, կոլխոզների, ՄՏԿ-ների և մյուս հիմնարկների տնտեսական մարմինները ամեն կերպ պետք է ոժանդակեն գյուտընկերությանը տալով նրան լայն հնարավորություններ գյուտարարության և ռացիոնալացման գործի ծավալման համար։

9. Սոցիալիստական փորձի փոխանակումը կարգավորելու համար լայն չափով ծավալել ՍՈ-ի (սոցիալիստական փորձի փոխանակում) քարտատեկների ուսումնասիրումը և կազմակերպել գիտական գործուղումներ միության զանազան վայրերը։

10. Առաջարկել գյուտարարական խորհրդի գործող ապարատին գործարանային գյուտխորհուրդների նախագահներին։

ա) մասսայականացնել տնտմարմինների և ժողկոմատների կողմից առաջադրված սոցիալիստական պատվերները, նրանց շուրջը համախմբելով գյուտընկերության անդամների ստեղծագործական կոլլեկտիվ նախաձեռնությունները։

բ) Ուժեղացնել գյուտընկերության աշխատանքները տեղերում նրանց շարքերը խտացնելով լավագույն աշխատավորներով, ստախանովականներով, ինժեներա-տեխնիկական աշխատողներով։ Միաժամանակ այն խոշոր գործարաններում, կոլխոզներում, սովխոզներում և ՄՏԿ-ներում վորտեղ չկան գյուտընկերության ընկերություններ կազմակերպել այդպիսին։

գ) Գյուտընկերության անդամներ. գյուտարարների, ռացիոնալիզատորների և ստախանովականների տեխնիկական մակարդակը բարձրացնելու համար կազմակերպել տեխնիկական ուսուցման դասընթացքներ։

դ) Լայն չափով ծավալել և մասսայականացնել գյուտարարության և ռացիոնալացման վերաբերյալ կուսակցության և կառավարության վորոշումները։ Հսկել և հետևել վորոշումների ճիշտ կատարմանը, և այն տնտմարմինները, վորոնք չեն կատարում և ճիշտ կերպով չեն իրագործում կուսակցության ու կառավարության վորոշումները այդպիսիներին դատական պատասխանատվության յենթարկել։

ե) Գյուտընկերության անդամների մեջ սիստեմատիկաբար իրավական ու տեխնիկական կոնսուլտացիաներ կազմակերպելու, ինչպես նաև գյուտարարների և ռացիոնալիզատորների աշխատանքի փորձը ցուցադրելու համար մինչև հուլիսի վերջը կազմակերպել ցուցահանդես։

զ) Ուժեղացնել տեղերում մասսայական դաստիարակչական աշխատանքները պայքար մղելով և անհապաղ մերկացնելով գյուտընկերության կեղծ անդամներին և կեղծ գյուտարարներին։

11. Հասարակական կոնտրոլն ուժեղացնել գյուտռաց. առաջարկների ժամանակին կենսագործման նկատմամբ։ Հսկել և ոժանդակել վորպեսզի յուրաքանչյուր առաջարկ իր ժամանակին ընթացք ստանա պայքարը ուժեղացնելով առաջարկների բոլոր տեսակի ձգձգումների դեմ, մերկացնելով այն անձերին, վորոնք այսպես թե այնպես արգելակում են նրանց զարգացմանը և խոչընդոտ են հանդիսանում գյուտարարության և ռացիոնալացման գործի ծավալմանը։

12. Հարց հարուցել Ժողկոմխորհի առաջ ուժեղացնելու գյուտարարական կոմիտեն։ Այն դարձնելով խորհրդային ծավալվող գյուտարարությունը ղեկավարող ու տոն տվող հեղինակավոր ապարատ։

13. Հարց հարուցել արդարադատության Ժողկոմատի առաջ անհապաղ միջոցների ձեռնարկելու դատական որգաններում գյուտռաց. առաջարկների նկատմամբ բողոքներին ժամանակին

511

լուծում տալու, մնաժնմանակ յենելով համամիութենական դատախազ ընկ. Վիշչենսկու հրամանից սիստեմատիկաբար ստուգումներ կազմակերպել տեղերում գյուտ. աշխատանքների վերաբերյալ։

14. Խնդրել ՀԼԿՅԵՄ կենտկոմին իր ներքին կազմակերպությունների ոժանդակությունը ուժեղացնելու գյուտարարության և ռացիոնալացման աշխատանքների նկատմամբ թերթ հեծելազորների ղեկատները դարձնելով գյուտարարության գործին ամենորյա ոժանդակող ու հսկող բրիգադներ։

15. Հարց հարուցել կենտվարչությունների և գործարանակոմների առաջ իրենց ամենորյա ոժանդակությունը ապահովելու գյուտարարության և ռացիոնալացման գործին, այդ ուղղությամբ գործի լծելու ներքին վերահսկողության խմբակները, սիստեմատիկաբար ստուգման յենթարկելու գյուտռաց. աշխատանքների ընթացքը։ Կենտվարչությունների և գործարկոմների նիստերում սիստեմատիկաբար լսել գյուտխորհրդի նախագահների և տնտեսավարների զեկուցումները և ոժանդակել գյուտխորհուրդներին աշխատանքները լավ կազմակերպելու և գլխավորելու համար։

16. Հարց հարուցել ՇՏՍ-ի առաջ միջոցներ ձեռք առնելու ուժեղացնելու ՇՏՍ-ի բյուրոների առորյա գործնական ոժանդակությունը բանվոր գյուտարարներին։

17. Առաջարկել գյուտխորհրդի նախագահությանը խիստ հրահանգություն սահմանելու պլենումի վորոշումների ժամանակին կատարման վրա։

ՀՍՍՀ-ՍՍՌ

ԿԱՌՈՒՑՈՒԿԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ

Ֆլավիտ Ա—8 Պատ. № 37 Տիրաժ 200

ՀՀ Ազգային գրադարան
NL0070738

243